

Քանի մ'որ ետքը Սարգիս Յակոբայ ներկայացաւ, եւ ըսաւ որ Եւդոկիոյ առաջնորդութենէն կը հրաժարի, եւ խնդրեց որ թոյլ տայ Վ.Պոլիս ապրելու քաջուած եւ առանձին: Յակոր ընդդիմացաւ, ըսելով որ ասոր հրովարտակն արդէն ելած է, եւ գէթ տարի մը նոյն առաջնորդութիւնը վարէ: Սարգիս տեղի տուաւ, սակայն Պոլիս մնաց եւ Եւդոկիա իրեն փոխանորդ մը կարգեց:

Այս ամէն գէպքերուն պատճառաւ Սարգիս ծանր պարտուց տակ ինկած էր, դրամ չուէր հատուցանելու, եւ տպագրած գրքերն ալ անվաճառ կեցած էին: Իշխանները երբ լսեցին, իրմէ հաշիւն ուզեցին աքսորանաց պատճառաւ եղած ծախուց: Այս հաշիւն իշխանք եւ ի մասնաւորի Աբրահամ Քուլէլեան, Յակոբայ ներկայացուցին, եւ պահանջեցին որ սոյն գումարը հատուցանէ Սարգսի: Յակոր թէեւ ընդդիմացաւ, սակայն չկրցաւ իշխանաց հակառակիլ, ամբողջ հատուց Սարգսի, եւ Քիոս ղրկած հարիւր ոսկին ալ շնորհեց: Նոյնպէս Սիմէոն Վ. Նուիրակ, որ աքսորման օրը Սարգսի հարիւր ոսկի փոխ տուած էր, ամբողջը շնորհեց:

Այսպէս Յակոր թոյլ տուաւ Սարգսի որ ուզած տեղը բնակի, եւ ուզած եկեղեցին Վիրակի եւ Տօն օրեր քարոզ խօսի: Սարգիս ասով բոլոր անցեալը մոռցած, ստէպ Յակոբայ կ'երթար, կը տեսակցէր, ինչպէս նաեւ բոլոր Ամիրաններու դռները բաց էին իրեն համար, եւ մեծ շքով զինք կ'ընդունէին: Տարի մ'ետքը Սարգիս